ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՈՒՍՈՒՑՉԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի ուսուցիչներ,

Մասնագիտական տոնի՝ Ուսուցչի օրվա կապակցությամբ իմ շնորհավորական խոսքն եմ ուղղում ձեզ և սրտի խորքից բխող ջերմ ու անկեղծ բարեմաղթանքներս հղում բոլորիդ: Այս տոնն առիթ է մեծարելու նրանց, ովքեր իրենց ամենօրյա աշխատանքով կրթում ու դաստիարակում են մեր մատաղ սերնդին: Մեր երկրի ապագան մեծապես կախված է նաև ձեր ամենօրյա տքնաջան աշխատանքից: Կրթության հազարամյա պատմություն ունեցող մեր ժողովուրդը առանձնահատուկ հոգատարություն ունի դպրոցի և ուսուցչի հանդեպ: Մենք ջերմությամբ ու ակնածանքով ենք հիշում մեր ուսուցիչներին, նրանց դասերը, խրատները, որոնք ուղեկցում են մեզ ողջ կյանքի ընթացքում: Այսօր անկախ ցանկացած դժվարության, դուք ձեր աշխատանքը կատարում եք անտրտունջ ու արժանապատվորեն:

Հարգելիներս, մաղթում եմ ձեզ առողջություն, աշխատանքային և անձնական հաջողություններ:
Եղեք գնահատված, զինվեք համբերատարությամբ և հոգատարությամբ: